ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1962 Общественные науки

Վ. Ս. Դիլլյան

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ 1812 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

150 երկար տարիներ են մեկ բաժանում այն ժամանակաշրջանից, երբ 1812 թվականի Հայրենական պատերազմը բռնկեց անծայրածիր Ռուսաստանում, երբ ռուս ժողովուրդը ոտքի ելավ իր երկիրը ներխուժած Նապոլեոնյան հորդաների դեմ՝ հանուն հայրենիքի ազատության ու անկախության։ 150 տարի առաջ սկսվեց ռուս ժողովրդի հերոսական ու անձնվեր գոտեմարտը Նապոլեոն Բոնապարտի բազմաքանակ զորքերի հետ, որոնք եկել էին նվաճելու Ռուսաստանը, դարձնելու այն Ֆրանսիայի արբանյակը։ Լինելով ֆրանսիական խոշոր բուրժուազիայի ռեակցիոն մասի շահերի արտահայտիչը և վերջինիս կողմից օժտված անսահմանափակ լիազորություններով, Նապոլեոնը ձգտում էր ծնկի բերել Ռուսաստանը՝ հարթելու համար դեպի համաշխարհային տիրապետություն տանող ցնորամիտ ուղին։ Բայց ռուս ժողովրդի անսահման հայրենասիրությունը, նրա հերոսական ու զոհ ոգին ընդմիշտ հոգս ցնդեցրին Նապոլեոնյան խարխուլ երազանքները։

1812 թվականի Հայրենական պատերազմը մի բացառիկ էջ գրեց Սովետական Միության ժողովուրդների դարավոր պատմության հերոսական պայքարի դրվագներով լեցուն մատյանում։ Այն եկավ մեկընդմիշտ ապացուցելու, որ իսկապես ժողովուրդն է հանդիսանում պատմության կերտողը, պատմական զարգացման գլխավոր շարժիչ ուժը։ Այն եկավ մեկընդմիշտ ապացուցելու, որ անպարտելի է ամեն մի ժողովուրդ, որ մանկան քնքշությամբ ու անմիջականությամբ սիրում է իրեն ծնունդ տվող հայրենիքը և ոտքի է ելնում պաշտպանելու այն թշնամու ոտնձգություններից։

1812 թվականի Հայրենական պատերազմը սանձազերծեց ռուս ժողովրդի մինչև այդ նիրհող ուժերը, ուղղորդեց ռուսական հասարակության առաջադիմական տարրերին։ Կարելի է ասել, որ դեկաբրիստների շարժումը ծնունդն էր 1812 թվականի Հայրենական պատերազմի։ Վերջինիս բուն էությունն էր, որ դեկաբրիստներից շատերը մոտիկից ծանոթացան իրենց ժողովրդին, տեսան այն անձնազոհության, հաստատակամության ու հերոսության ոգին, որով օժտված էին ռուս ժողովրդական զանգվածները։ Հայրենական պատերազմի բովում էր, որ դեկաբրիստներն իրենց առաջին քաղաքական մկրտությունն ստացան։

1812 թվականի Հայրենական պատերազմին իրենց գործուն մասնակցությունը բերին ռուսական կայսրության բազմաթիվ ժողովուրդներ, որոնց թվում էին նաև հայ ժողովուրդը։ Ռուսական բանակի շարքերում, եղբայրակից ռուս ժողովրդի զավակների հետ կողք-կողքի Նապոլեոնյան զորքերի դեմ մարտնչում էին շատ հայ զեներալներ ու սպաներ՝ Վ. Մադաթովը, Դ. Դելյանովը, Դ. Աբամելիքը, Ի. Արամելիքը, Պ. Մելիքովը, Հ. Լազարյանը, Վ. Բեհբութովը, Ի. Ախշարումովը և ուրիշներ, թերևս և ռազմիկներ։ Նրանք անձնվիրաբար կռվում էին

ընդհանուր թշնամու դեմ, տանուն «Հայրենեացն Ռուսաստանեայց»։ Նրանցից շատերն իրենց պսակեցին հերոսության դափնեպսակով, ոմանք էլ ընկան պատերազմի արյունոտ դաշտում (Հ. Կաղարյան, ռոտմիստր Դելյանով և այլն)։ Հայերի գործունյա մասնակցությունը 1812 թվականի Հայրենական պատերազմին պատահական երևույթ չէր։ Այն ուներ իր պատճառները և շարժառիթները։

*

Հնագույն ժամանակներից սկսած Ռուսաստանում գոյություն ունեին հայկական գաղթավայրեր։ 18-րդ դարում հայկական այդ գաղութների թիվը բազմապատկվեց։ Պարսկա-թուրքական դշխեմ բռնություններից փրկության ելք որոնող մեծաթիվ հայ ժողովրդական զանգվածները ապաստան էին փնտրում Ռուսաստանում։ 19-րդ դարի սկզբին, երբ սկսվեց 1812 թվականի Հայրենական պատերազմը, Ռուսաստանում հայկական խոշոր գաղութներ գոյություն ունեին Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր-Նախիջևանում, Աստրախանում, Ղզլարում, Մոզդոկում, Գրիգորիոպոլում և այլուր։ Օգտվելով ռուսական կառավարության կողմից տրված որոշ առանձնաշնորհումներից, որոնք նպաստակ էին հետապնդում զարկ տալու երկրի հետագա տնտեսական զարգացմանը, ունեին Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր-Նախիջևանում, Աստրախանում, ունեին զարգացնելու առևտուրն ու արդյունաբերությունը։ Բնական է, որ հայկական վերոհիշյալ գաղթավայրերի տնտեսական ու քաղաքական վիճակը բավական սերտ աղերս ունենար ռուսական կառավարության վարած քաղաքականության հետ, որ հայերը շահագրգռություն հանդես բերեին որոշ քաղաքական ու տնտեսական հարցերում, որոնք այս կամ այն չափով շոշափում էին նրանց անմիջական շահերը։ Մատենադարանի կաթողիկոսական դիվանում, օրինակ՝ պահպանվել է Տիլզիտի պայմանագրի ժամանակի հայերեն թարգմանության պատճենը, ընդորում հիշյալ թարգմանությունը կատարված է ինչպես դրաբարով, այնպես էլ Նոր-Նախիջևանի բարբառով։ Վերոհիշյալ օրինակը դալիս է մեզ ասելու, ինչպես մենք ենք կարծում, որ Տիլզիտի պայմանագրի կնքումը, որով Ռուսաստանը միանում էր կոնտինենտալ բլոկադային, որոշ իմաստով հարվածում էր նաև հայկական գաղթավայրերի և այդ գաղթավայրերում հրամանատարական բարձունքները գրաված հայ վաճառականների շահերին։ Առևտրական լայն գործառնություններով կապված լինելով Արևելքի ու Արևմուտքի հետ, կատարելով մեծաքանակ միջանցիկ առևտուր, հայ վաճառականները չէին կարող, անշուշտ, անտարբերությամբ դիտել իրենց գործունեության դաշտի նեղացումը։ Սա, իհարկե, մի հարց է, որ կարող է հատուկ ուսումնասիրության, բայց և այնպես կարելի է հավանական համարել նրա հշմարտացիությունը։ Այստեղ անհրաժեշտ է նաև ի նկատի ունենալ մի այլ կարևոր մոմենտ։ Դոնի գետաբերանում կառուցված Նոր-Նախիջևան քաղաքը, որ 19-րդ դարի սկզբում տնտեսական բավական խոշոր դեր էր խաղում Ռուսաստանի հարավում, աշխույժ առևտուր էր կատարում Օսմանյան կայսրության հետ։ Ռուսական երկաթի մի մասը Նոր-Նախիջևանի վրայով արտահանվում էր դեպի Թուրքիա։ 1806—1812 թվականների ռուս-թուրքական պատերազմը, որի հրահրման գործում փոքր դեր չէին խաղացել Նապոլեոնյան գործակալները, այդ առևտրական կապերին խոշոր հարված էր հասցնում, բավական ծանր դրության մատնելով հայ վաճառականներին։ Մյուս կողմից՝ Թուրքիայի հայ

վաճառականները, առանձնապես Մոլդավիայի և Վալախիայի հայ վաճառականությունը, ինչպես վկայում են Լենինգրադի Պետրոնական պետական պատմական արխիվի Արամելիք—Լազարյանների ֆոնդում պահպանված բազմաթիվ վավերագրեր[1], սերտ առևտրական կապեր ուներ Ռուսաստանի հետ, և պատերազմը նրանց շահերին նույնպես խոշոր հարված էր հասցնում։ Ուստի պարմանալի չէ այն մեծ դերը, որ խաղաց Բուխարեստի հաշտության պայմանագրի կնքման գործում Մոլդավիայի խոշոր հայ վաճառականներից և հողատերերից Սանուկ բեյ Միրզայանը, իր մատուցած ծառայությունների համար տանալով ռուսական ազնվականի տիտղոս և բազմաթիվ պարգևներ ռուսական կառավարության կողմից։ Այստեղից էլ հետաքրքրությունը դեպի Տիլզիտի պայմանագիրը, և այդ պայմանագրի հայերեն թարգմանության առկայությունը։

Բայց Ռուսաստանը սոսկ մի երկրորդ հայրենիք չէր հանդիսանում այնտեղ բնակություն հաստատած հայերի համար։ Անհերքելի է նաև, որ հայերը Ռուսաստանից քաղաքական լուրջ բնույթ կրող մեծ ակնկալություններ ունեին։

18-րդ դարի սկզբին էր, որ Իսրայել Օրու խմբագրությամբ ծնունդ առավ հայկական ազատագրական վաղեմի լեգենդի նոր, և այս անգամ վերջնական տարբերակը։ Այն հուշակում էր, որ Հայաստանը ցանկալի ազատագրությունը կգտնի միայն Ռուսաստանի օգնությամբ։ Դա պատմական կտրուկ շրջադարձ էր, որ ձևավորում էր հայերի վերջնական կողմնորոշումը։ Հայ ազատագրական շարժման 18-րդ դարի բոլոր փայլուն ներկայացուցիչները՝ Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Հովհաննես Լազարյանը և Հովսեփ Արղությանը Հայաստանի ազատագրության հարցը կապում էին միայն և միայն Ռուսաստանից ստացվելիք օգնության հետ։ Նրանք իրավացիորեն գտնում էին, որ ստեղծված պատմական իրադրության առկայության պայմաններում քաղաքական միակ ուժը, որը կարող էր իրական օգնություն ցույց տալ հայրենիքի ազատության տենչով տոգորված հայ ժողովրդին՝ Ռուսաստանն էր։

Վրաստանի և հյուսիսային Հայաստանի մի մասի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի սկզբին, առավել ևս ամրապնդեց այդ համոզմունքը, մանավանդ երբ 1804 թվականին սկսվեց ռուս-պարսկական պատերազմը, որն էլ ավելի շոշափելի դարձրեց, մարմին ու ձև հաղորդեց այդ վաղեմի հույսերին ու ակնկալություններին։

Բնական է, որ հայ ազատագրական շարժման գործիչները մեծագույն շահագրգռություն ցույց տային Ռուսաստանի հզորության հարցում, ապրեին վերջինիս հույսերով, բաժանեին նրա հոգսերը։ Նրանք մեծապես համոզված էին, որ Ռուսաստանն է «հոյսն Ասիոյ», հետևաբար և Ռուսաստանն է, որ ազատություն պիտի բերի արևելյան զույգ բռնապետությունների լծի տակ հեծող Հայկական բնաշխարհին։

Երբ սկսվեց 1812 թվականի Հայրենական պատերազմը, հայ գործիչները ամենուր, լինի դա Ռուսաստանում, Թուրքիայում կամ Հայաստանում, սկսեցին լարված հուզումով հետևել դեպքերի զարգացմանը, ուրախանալ Ռուսաստանի հաջողություններով, տխրել նրա անհաջողությունների համար։

---

1 Տե՛ս ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. 256, նաև «Собрание Актов относящихся к обозрению истории армянского народа», ч. I, М., 1833 г., стр. стр. 51, 256, 260

Հովակիմ Լազարյանը հետևյալ բառերով էր նկարագրում Եփրեմ կաթողիկոսին հղած իր նամակում Մոսկվայի ավերումը. «Վասն Մոսկով քաղաքի ավերմանն ոչ բովանդակեմ ասել զիովին պատմութիւն՝ ասեմ միայն՝ որ բովանդակ գեղեցկաշէն և երևելի տունք բնակչաց, նաև պալատքն թագաւորականք, վանորայք և եկեղեցիք բազումք եղէն կերակուրք հրոյ և մեր երկու եկեղեցիքն անդ ողորմութեամբ աստուծոյ մնացին անվնաս, բայց մի տունն իմ այրեցեալ է և ի միւսում ամենայն կարասիք տան և ինչքն իմ կողոպտեալ»[2]։

Իմանալով թշնամու կողմից Մոսկվայի հրդեհման և կողոպտման մասին, Եփրեմ կաթողիկոսը ցավով գրում էր.

«Յիրաւի՝ ոչ կարեմ բովանդակել ընդ գրով զառաւելութիւն մեծի սրրատութեանս և ցաւոյս, զոր զգացի և զդամ տակաւին յանձին իմում յաղագս աւերութեան հրաշակերտ մայրաքաղաքին Մոսկովու և զանազան նեղութեանց բնակչացն նոսա և ի շրջակայս նորին...»[3]։

Հետաքրքիր է նշել, որ երկրում ծավալված աշխարհազորային շարժմանը օժանդակեց նաև Հովակիմ Լազարյանը։ Մոսկվայի մերձակայքում գտնվող իրեն պատկանող Ֆրյանովոյի մետաքսագործական ֆաբրիկայի բանվորներից նա իր սեփական միջոցներով զինեց և կազմակերպեց 68 աշխարհազորայիններ, որոնք իրենց գործունեությունը բերեցին 1812 թվականի Հայրենական պատերազմին[4]։

Թշնամու ներխուժումից և Ռուսաստանում կատարած ավերածություններից հետո սկսվում է հանգանակություն՝ պատերազմից տուժածներին օգնություն ցույց տալու նպատակով։ Այդ հանգանակությանը իրենց գործունեությունն են բերում նաև Ռուսաստանի հայկական գաղթավայրերի բնակիչները։ Այսպես, օրինակ, Մոզդոկում հավաքում են ավելի քան 2500 ռուբլի դրամ, Դզլարում՝ ավելի քան 10.000 ռուբլի։ Նոր-Նախիջևանի հայերը նվիրաբերեցին 25000 ռուբլի[5]։ Սակայն դրամական ամենախոշոր օժանդակությունը ցուցաբերեց Աստրախանի հայկական համայնքը, որը «ներկա պայմաններում աչքի ընկավ առավել քան սպասելի էր և իր կողմից նվիրաբերելով մինչև 73 հազար ռուբլի»[7]։ Այդ գործում մեծ դեր էր խաղացել Աստրախանի հայտնի մեծահարուստ հայ վաճառականներից Գրիգոր Արեսալոմովը որպես տեղի հայկական Ռատհաուզի երեք դատավորներից մեկը, անձնապես օրինակ ծառայելով մյուսների համար և այդպիսով օժանդակելով նման կարևոր դրամական նվիրվատվությանը[8]։

Եթե թշնամու առաջխաղացումն ու կատարած ավերածությունները ցավ էին պատճառում հայերին, ապա նրա նահանջը ընդհանուր խանդավառություն առաջացրեց վերջիններիս մոտ։ Գործող բանակում գտնվող, հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի Հովակիմ Լազարյանի որդի Հարություն (Արտեմ) Լազարյանը «Հրճվանքով» եղբորը՝ Խաչատուրին գրում էր, որ թշնամին մեծա-

---

2 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 104, գ. 101, վավ. 11։

3 Նույն տեղում, թղթ. 103, գործ 5, վավերագիր 9։

4 ЦГИАЛ, ф. 880, оп. 4, д. № 6, л. 1.

5 Մատենադարան, կաթողիկոսական գիվան, թղթ. 24, վավ. 59։

6 ЦГВИА, ф. ВУА, 1813, д. 3465, ч. 12, л. 132.

7 Նույն տեղում, 35—36։

8 Նույն տեղում։

մեծ կորուստներ տալով անընդհատ նահանջում է։ Հետաքրքիր է Հարություն Լաղարյանի վկայությունն այն մասին, թե ինչպիսի հսկայական չափեր էր ընդունել ժողովրդական զանգվածների սրբազան ատելությունը դեպի թշնամին, և որը նրանց ոտքի էր հանել հայրենական ոգեշունչ պատերազմի։ Եղբորը ուղղված վերոհիշյալ նամակում նա գրում էր, որ պատկերացնել անգամ չի կարելի, թե որքան մեծ թափ է ընդունել ժողովրդական շարժումը, որ համարյա ամեն մի գյուղի մոտ, որոնց հանդիպում էր իր ճանապարհին թշնամուն հետապնդող ռուսական բանակը, կարելի է հանդիպել դիակների, որոնք վկայում են պարտիզանների հետ տեղի ունեցած ընդհարումների մասին[9]։

Ինչպես արդեն նշել ենք վերևում, ամենուր հայերը լարված հետաքրքրությամբ հետևում էին Ռուսաստանում ծավալված ռազմական գործողությունների զարգացման ընթացքին։ Բեսարաբիայի հայերի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը 1813 թ. ապրիլի 6-ի թվակիրը կրող մի ընդարձակ նամակում, որի միայն վերջին մասն է պահպանվել, Եփրեմ կաթողիկոսին մանրամասն տեղեկացնում էր հայրենական պատերազմի ողջ ընթացքը, վերջում հույս հայտնելով, որ այդ տարի պատերազմը իր ավարտին կհասնի և աշխարհին խաղաղություն կտիրի[10]։

Պատերազմական գործողությունների ընթացքին ուշի-ուշով հետևում էին նաև Թուրքիայի հայերը։ Ներսես Աշտարակեցուն հասցեագրված մի նամակում Մահտեսի Հարություն և Մահտեսի Խաչատուր Մելիքզարմյանները Զմյուռնիայից հաղորդում էին մանրամասնարար, թե ինչպիսի շփոթություն է առաջացել Թուրքիայի ֆրանսիական շրջաններում, երբ այստեղ իմացվել է ռուսների հաջողությունների մասին, և թե ինչպես ռուսները Կոստանդնուպոլսում և Իզմիրում տոնախմբություններ են կատարել ի նշանավորումն ռուսական զենքի հաղթության[11]։ Ցավոք սրտի, այդ նամակը մանրամասն տեղեկություններ չի պարունակում Թուրքիայի հայերի վերաբերմունքի մասին դեպի 1812 թ. հայրենական պատերազմը։ Սակայն նամակի առկայությունը և այն հանգամանքը, որ այն ուղղված է Ներսես Աշտարակեցուն, տվյալ ժամանակի ռուսական օրիենտացիայի համոզված կուսակիցներից մեկին, արդեն իսկ խոսում է այն մասին, որ Թուրքիայի հայերը ևս ողջունում էին ռուսների հաղթանակը։

Այդ նույն տարիներին է վերաբերում թերևս Ներսես Աշտարակեցուն ուղղված մի ծածկագիր նամակ, որտեղ հայտնվում է հետևյալը. «Նոր լուր այս է. Պոնապարթն ԲՃՌ (200000) զորքով անցկացաւ գնաց իւր հողն»։ Այնուհետև անհայտ նամակագիրը խորհուրդ է տալիս հավատալ միայն իր հաղորդած տեղեկությանը, գրելով թե «եթե այլք ինչ ասեին, գրեն կամ ասեն ունայն է...»[12]։

Մեր կարծիքով այս նամակն էլ մի վկայություն է, որ էջմիածնում անհամբերությամբ հետևում էին դեպքերի զարգացմանը, որ այնտեղ մեծ էր շահագրգռությունը դեպի Ռուսաստանի հաղթանակը։ Այստեղ չպետք է մոռանալ, որ Պարսկաստանում գործող Նապոլեոնի գործակալները ամեն կերպ հրահրում էին Պարսկաստանին՝ ծավալելու ռազմական գործողություններն ընդդեմ Ռուսաստանի և, չնայած ռուսական կողմի թափած ջանքերին՝ շուտափույթ հաշտություն կնքելու, որպիսի լիազորություններով և Անդրկովկաս էր ուղարկվել

9 Մատենադարան, Լաղարյանների արխիվ, թղթ. 102, գործ. 17, վավ. 43։

10 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 24, վավ. 22։

11 Նույն տեղում, թղթ. 24, վավ. 18։

12 Նույն տեղում, թղթ. 24, վավ. 193։

Վրաստանի նոր կուսակալ Ռոտիշևը, պատերազմական գործողությունները շարունակվում էին։ Այդ կապակցությամբ Անդրկովկասում կարող էին պանապան ստահոդ տեղեկություններ տարածում գտնել, որոնցից և հավանարար, գգուշացնում էր ծածկագիր նամակի անհայտ հեղինակը, այդ բոլորը համարելով «ունայն» և ճիշտ միայն իր հաղորդած տեղեկությունը։

1813 թվականի հունիսի 6-ին Ներսես Աշտարակեցուն հաղորդելով, որ «ենարալ Ղուտուսով հմտագոյն շէֆն մեռեալ է ի մահճի իւրում», Սերովբե Կարնեցին միաժամանակ գոհունակությամբ նշում էր, որ ռուսների նպատակն է «կործանել զբռնակալութիւն Փոնարարթէին»[13]։

Մեծ էր ժամանակի հայ գործիչների նվիրվածությունը դեպի Ռուսաստանը. սրտին մոտ նրա մղած պայքարը, ուստի նրանք 1812 թվականի պատերազմը համարում էին հայրենական նաև ռուսահայերի համար։ 1813 թվականի հոկտեմբերի 4(17)-ին Լայպցիգի ճակատամարտում ընկավ լեյբ-գվարդիայի հուսարական գնդի շտաբս-ռոտմիստր Հարություն Լազարյանը։ Այդ կապակցությամբ 1814 թվականի մայիսի 27-ին Աստրախանից Հովակիմ Լազարյանին գրած իր մխիթարական նամակում ռուսահայերի առաջնորդ Հովհաննես Գառնակերյանը նշում էր. «...քաղցր և վայելուչ է վասն հայրենեաց մեռանիլ»։ Նրա համոզմունքով Հարություն Լազարյանի մահը «...յարացոյց ի գովեստ լինի առեալ յԱրամեանս գրոհի՝ և ի քաջութեամբ սեպուհացելոյ ազգին ռուսաց»[14]։ Նա Հարություն Լազարյանի մահը դիտում էր որպես մահ «...ի ջատագովութիւն հայրենեաց, որ հեղմամբ արեան իւրոյ կարեէր խոցուածոց հասարակութեան սպեաց սպեղանի կազմեալ, զյորգահոս արեան նոցա արգել զրդխումն»[15]։

Այդ նույն առիթով Եփրեմ կաթողիկոսը հետևյալն էր գրում Հովակիմ Լազարյանին. «...Լուսահոգի հանգուցեալն երջանիկ իմն մահուամբ հանդիսացեալ կատարեցաւ պատերազմելով ընդդէմ ամենայանդուգն թշնամւոյն մեծ կայսերութեան ամենայն ռուսաց, և ցանկալի խաղաղութեան աշխարհի...»[16]։

Կարծիքը մեկ էր, գնահատականը մեկ։ Ռուսաստանի համար պայքարելը, հանուն Ռուսաստանի կյանքը նվիրաբերելը նրանք դիտում էին որպես հայրենասիրական պարտք։ Ռուսաստանի հանդեպ նման նվիրվածությունը, որ ցուցաբերում էին ժամանակի աչքի ընկնող հայ գործիչները, խոսում է այն մասին, որ նրանք կողմնորոշվելով դեպի Ռուսաստան՝ իրենց ժողովրդի և իրենց հայրենի երկրի պատմական ճակատագիրը վերջնականապես կապել էին Ռուսաստանի, ռուս ժողովրդի հետ, Ռուսաստանի հաջողությունների մեջ էին նրանք տեսնում վաղեմի տենչանքների իրագործման միակ իրական միջոցը։ Պահպանվել և մեզ են հասել բազմաթիվ վավերագրեր, որոնք վկայում են այդ պարագան։ Դարասկզբին Վրաստանի միացումը Ռուսաստանին, իսկ այնուհետև ռուս-պարսկական երկարամյա պատերազմը, որի ընթացքում ռուսական զորքերը քանիցս եղան Երևանի մատույցներում, խոսում էր հօդուտ այն բանի, որ մոտալուտ է այն օրը, երբ հնամենի իղձերը մարմին և արյուն կըստանան։ Զուր չէր. որ Ներսես Աշտարակեցին Ռուսաստանը համարում էր «հոյսն Ասիոյ»։

---

13 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 24, վավ. 46։

14 Նույն տեղում, վավ. 172։

15 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 109, գ. 9, վ. 173։

16 Նույն տեղում, թղթ. 103, գործ 5, վավ. 94։

Հայ գործիչները դեպքերի թարմ ազդեցության տակ, ճիշտ ընորոշում և գնահատական տվեցին այն ազատարար միսիային, որ կոչված էր կատարելու ռուսական բանակը Եվրոպայում։ Փաստ է, որ ռուսական զորքերի հաղթական մուտքը Եվրոպա և երթը Փարիզ, ազդանշան հանդիսացավ ազգային-ազատագրական շարժումների։ Դարերից ի վեր կազմակերպված և ինքնուրույն պետականություն ունեցող ժողովուրդները, որոնք մի պահ ընկրկելով բանակալի առաջ, ստիպված էին եղել իրենց վրա վերցնելու ստրկության ծանր լուծը, ռուսական բանակի տարած հաղթանակների հետևանքներով դոտեպնդվեցին. միահամուռ ոտքի ելան հանուն իրենց ազատագրության։ Այլ բան է, որ ռեակցիան ավելի ուժեղ հանդիսացավ և ցանկալի արդյունքները չստացվեցին։

Ռուսական զորքերի հաղթարշավը ընդհանուր ցնծություն և բերկրանք առաջացրեց հայկական շրջաններում։

Հովակիմ Լազարյանը հետևյալ խոսքերով էր նկարագրում ռուսների հակահարձակման անցնելը և թշնամու նահանջը. «...զօրքն մեր յաղթանակութեամբ վանեն զթշնամին ի սահմանաց տերութեանս, անհնարին թիւ դերեաց, հրացանից և զրօշակաց անկելոց ի ձեռս զօրաց մերոց վկայեն որ թշնամին ի մեծ տագնապի և ի նեղութեան փախչի ի սահմանցս։ ... սպասեմք յաջողութեամբ աւարտման պատերազմիս»[17]։

Այդ կապակցությամբ Թիֆլիսից տեղի առաջնորդ Աստվածատուրը գրում էր Հովակիմ Լազարյանին. «Գոհութիւն Աստուծոյ, որ այն ամենայն մրրիկք անցին և արեգակն աստուածային առատ ողորմութեան ճառագայթեաց ընդ լայնածաւալ տէրութիւն ռուսաց, բարձրացաւ վառք և պատիւ զոյնոյ հայրենեաց. և ջերմեռանդական յոյս և ապաւինութիւն ամենաբարեպաշտ կայսերն մերոյ դեր քան զոհ ընդունելի հաճոյացեալ յաչս երկնաւոր կայսեր ի բաց վանեաց զթշնամին և փշրեաց զհամայն զօրութիւնս, որովք պանծայր ի մէջ բոլոր Եւրոպայոյ»[18]։

Ռուսական զորքերի կողմից Փարիզի գրավումից անմիջապես հետո, 1814 թ. հունիսի 25-ին, Հակոբ Շահան Ջրպետյանը Հովակիմ Լազարյանին գրած նամակում, իր ուրախությունը հայտնելով, որ «...յետ տարուբերելոյ ի չափազանցն ալէտանջութեանց իրաց աշխարհիս՝ ժամանելով ի կէտն պայմանագրեալ՝ ի նաւահանդիստն խաղաղութեան մտաց և զինուց դադարման, շնորհիւ տեառն և բուռն զօրութեամբ մեծայաղթ կայսեր Աղէքսանդրի և նորին նիզակակից տերութեանց», համարում էր «տենչալի իմն» «ուրախակցել ընդ ձեզ և ընդ անցնիւր բարեկամս խաղաղասէր, գոհանալով միանդամայն զբարձրելոյն՝ վասն ազատութեան ձերոյն, ի նախկին հարուածոյն՝ որ ի մէնջ, և վասն մերոյն՝ որ յերկրորդուն առ ի ձէնջ»[19]։

Իսկ հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Արովյանը «Վերք Հայաստանի» էջերում, խոսելով ընդհանուր ցնծության ու խանդավառության մասին, որ առաջացրել էր հայ ժողովրդի մեջ Երևանի ազատագրումը պարսկական լծից, այն համեմատում էր ռուսների կողմից Փարիզը գրավելու հետ. «Մեծ էր հիրավի ու անմոռանալի ռուսաց Փարեժ մտնելը, բայց ե՞րբ դաղդիացիք էն հոգվովը

17 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 104, վավ. 10։
18 Նույն տեղում, թղթ. 103, գործ 9, վավ. 143։
19 Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 210գ։

իրանց բախտավորությունը կվայելեին, ինչպես հայք էս արժանահիշատակ օրը»[20]։

Ժամանակի հայ գործիչները Ռուսաստանը համարում էին որպես «փրկիչ Եվրոպիոյ և հոյսն Ասիոյ» (Ներսես Աշտարակեցի)։ Այժմ, երբ Ռուսաստանը ծանր ու ավերիչ պատերազմից հաղթական էր դուրս եկել, նրանք սպասում էին, որպեսզի նա փրկություն բերի նույնպես և օտար ծանր լծի տակ տառապող իրենց հայրենի աշխարհին։ Այդ պարագայի լավագույն հաստատումն մենք գտնում ենք Եփրեմ կաթողիկոսի կողմից 1814 թվականի հուլիսի 20-ին Ալեքսանդր I-ին ուղարկված շնորհավորական գրության մեջ, որի սևագիր մեկ օրինակը պահպանվել է Մատենադարանի կաթողիկոսական դիվանում։

Գրելով, որ «ապաքէն և մեք տէր թագաւոր մեր վերամատուցանեմք Աստուծոյ զփառս, որ փառաւորեց զմեծութիւն հակառոցն ձերոց առաւել քան զամենայն զզօրութիւնս աշխարհին այսօրիկ», նա ի սրտե բխած մեծագույն ուղղումով բացականչում էր. «Ո՜վ, թէ որպիսի երջանկութիւն էր մեզ՝ եթե ոչ էաք յանդիման դրախտին արտաքոյ, և ոչ արգելոյր զընթացս մեր առ ծառդ կենաց սուրն բոցեղեն»։ Մեծ էր վիշտը ծերունի Եփրեմ կաթողիկոսի, որ Հայաստանը բաժանված է Ռուսաստանից «բոցեղեն սրով», որն արգելք էր հանդիսանում հայերի համար ընթանալու դեպի ցանկալի կետ նպատակը, այսինքն՝ միություն Ռուսաստանի հետ։ Տարաբախտություն համարելով դա իր և իր բազմաչարչար ժողովրդի համար, նա հեռվից հեռու «ի ծունկս անկեալ հանդերձ ողջոյն ազգաւ հայոց ... Տարածանեմք առաջի բարձր և խոնարհ աստուածանման ձերում տէրութեան զջերմեռանդութիւն և զանհամեմատ ուրախութիւն ողջոց մերոց»[21]։

Մեծ էր հայ գործիչների հավատը դեպի Ռուսաստանը, նրանց մեջ մեծագույն խանդավառություն էր առաջացրել ռուս ժողովրդի տարած պատմական փայլուն հաղթանակը անագորույն թշնամու դեմ։ Դա մի հաղթանակ էր, որ երկար ժամանակով անխոցելի և ապահով էր դարձնում թշնամական հարձակումներից Ռուսաստանի արևմտյան սահմանները։ Դա մի հաղթանակ էր, որ հնարավորություն էր ընձեռում ռուսական կառավարությանը վերադառնալու Անդրկովկասում իր նվաճողական վաղեմի ծրագրերի լիակատար իրագործմանը, մի հանգամանք, որ օբյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին։

Եվ իսկապես։ Շատ շուտով Ռուսաստանը ընդհուպ ձեռնամուխ եղավ Անդրկովկասի լիակատար միացմանը։ 1828 թվականին Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, անշուշտ, քաղաքական և պատմական մեծ նշանակություն ունեցող մի ակտ էր, որով հայության մի խոշոր հատվածի համար ստեղծվում էին զարգացման համեմատաբար բարենպաստ հեռանկարներ։ Այս անգամ ընկնելով ցարիզմի գաղութային լծի տակ, հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, ազատագրվեց ֆիզիկական ոչնչացման մշտական սպառնալիքից, որ դամոկլյան սրի պես մինչև այդ կախված էր հայ ժողովրդի գլխին։

Հայ գործիչները լավ էին հասկանում, որ Նապոլեոնյան հորդաների դեմ տարած հաղթանակը դուռ էր բաց անում Հայաստանի ազատագրության համար, որ անմիջական և այս անգամ հաստատուն նախադրյալներ էին ստեղծ-

20 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1948, էջ 179։
21 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 25, վավ. 39։

վում կյանքի կոչելու Հայաստանի ազատագրության հինավուրց երազները։ Այս իսկ տեսակետից պատահական չէր այն բավական թափանցիկ ակնարկը, որ անում էր Եփրեմ կաթողիկոսը Ալեքսանդր 1-ին գրած վերոհիշյալ շնորհավորական գրության մեջ։ Եփրեմ կաթողիկոսի համար եթե Ալեքսանդր 1-ը «յայտնեալ փրկիչն» էր «Եւրոպիոյ», «խաղաղարարը համայն աշխարհի», ապա էր նաև «լոյս և ակնկալութիւն մեր», այսինքն, Եփրեմի իսկ արտահայտությամբ «ժառանգաւորաց» և «ձերում (ռուսների — Վ. Ս.) ամենողորմած այցելութեան կարօտեալ տանն Նոյի՝ հօրն աշխարհի՝ հայրենեաց Հայաստանի...»[22]։ Պարզ է, որ Եփրեմ կաթողիկոսի կարծիքով հասել էր ի վաղուց հետէ այնքան ցանկալի ժամանակը, երբ հարկ էր, որ Ռուսաստանը վերջնականապես օգնության ձեռք մեկներ իր բազմաշարչար հայրենիքին, որը «բոցեղեն սրով» բաժանված էր Ռուսաստանից։

Ռուսական կառավարող շրջանները, անշուշտ, դիտեին, թե ինչպիսի մեծ հավատարմություն են տածում հայերը հանդեպ Ռուսաստանի և ինչպիսի քաղաքական հեռուն գնացող ակնկալություններ ունեն նրանից։ Այս իմաստով պատահական չէր, որ Վրաստանի կուսակալ, Ռտիշչևը և Թիֆլիսի գեներալ-նահանգապետ Մալինովսկին իրենց պարտքն էին համարում ամենայն հայոց կաթողիկոսին տեղյակ պահել և մասնակից դարձնել Ռուսաստանի տարած պատմական փայլուն հաղթանակին իր ամենահզոր թշնամիներից մեկի դեմ, գտնելով, որ դրանով նրան «կպատճառեն հաճելի բավականություն»[23]։

1812 թվականի Հայրենական պատերազմը մի նոր փորձաքար հանդիսացավ հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության։ Այն ժամանակ, երբ շատ հայեր կողք-կողքի, թև-թևի մարտնչում էին ընդհանուր թշնամու դեմ, հայ գործիչները իրենց նվիրվածության երաշխիքն էին բերում Ռուսաստանին՝ ցանկանալով նրան շուտափույթ հաղթանակ։

Թշնամու դեմ տարած հաղթանակի առթիվ Պետերբուրգում մեծ տոնակատարություն կազմակերպվեց, որին մասնակցում էին նաև հայ հասարակության ներկայացուցիչները։ Այդ կապակցությամբ Եփրեմ կաթողիկոսը պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու շքանշանով, իսկ ռուսահայերի առաջնորդ Հովհաննես Դատնակերյանը Աննայի առաջին աստիճանի շքանշան ստացավ։

1812 թվականի Հայրենական պատերազմից հետո դեպքերն Անդրկովկասում սկսեցին արագ հաստատվել։ Մոտալուտ էր արդեն այն օրը, երբ պետք է կատարվեր ցանկալի «այցելությունը», և Արևելյան Հայաստանը ազատագրվելով պարսկական լծից, ընդմիշտ կապեր իր պատմական ճակատագիրը ռուս ժողովրդի հետ։

1812 թվականի Հայրենական պատերազմը պատմական խոշորագույն ապացույցներից մեկն է այն սերտ բարեկամության, որ մշտնջենապես մի մյանց կապեց ռուս և հայ ժողովուրդներին, բարեկամություն, որ էլ ավելի կամրացավ և կոփվեց հետագա պատմական ժամանակաշրջանում։

1812 թվականի Հայրենական պատերազմը անջնջելի հետք թողեց ՍՍՌՄ ժողովուրդների պատմության էջերում։ Դա միակ անգամը չէր, որ մեր ժողովուրդները վճռական հակահարված պետք է տային համաշխարհային տիրա-

---

22 Մատենադարան, կաթողիկոսական գիրք, թղթ. 25, վավ. 39։

23 Այս մասին մանրամասն տե՛ս Մ. Ներսիսյան, նոր նյութեր 1812 թ. Հայրենական պատերազմի մասին, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1944, № 3—4։

պետության մոլուցքով տարված բռնակալին։ Այն ոգևորում և աննահանջ պայքարի էր մղում սովետական ժողովրդին ընդդեմ Հիտլերյան վայրի հրոսակների, որոնք պատերազմ հրահրեցին մեր հայրենիքի դեմ։ Երկրորդ անգամ էր սովետական ժողովուրդը ոտքի ելնում հայրենական սրբազան պատերազմի, ցույց տալով ողջ աշխարհին անպարտելիություն մի ժողովրդի, որը պատրաստ է արյան գնով պաշտպանելու իր հայրենիքը։

Պատմության նոր, մարդկությանը դեռևս անծանոթ արահետներով ընթանում է սովետական ժողովուրդը, դեպ դալու կոմունիզմի մայրուղին։ Բայց ուր էլ լինի նա, դեպի ինչպիսի շողշողուն բարձունքներն էլ գնալիս, միշտ սիրով և խնամքով պահում է իր հոգու ոսկեմատյանում անջյալի բոցավառ հիշատակները, որոնք հայրենասիրության փայլուն օրինակ ծառայելով նրա համար, միաժամանակ ահարկու նախազգացումն են գալիք բոլոր ագրեսորներին։